03040723 - 0940 - 0208

ՏԱՐԱԾՔ- ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղ. Երևան

Երկու հազար չորս թվականի դեկտեմբերի քսանյոթին

Մենք՝ Հենրիկ Պողոսյանս բնակվող քաղ. Երևան Օհանովի փող. ութ շենք բնակարան քառասունվեց, հետագայում «Փոխատու» և քաղ. Արմեն Մանուկյանս բնակվող քաղ. Երևան Կոմիտաս փող. յոթ կոտորակ չորս շենք բնակարան տասնմեկ որը լիազորագրով գործում է « ԵՎՐՈՊԱ » ՍՊԸ - ի անունից /լիազորագիր տրված 27.12.2004թ/, հետագայում « Փոխառու», կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1. Ես, Հենրիկ Պողոսյանս ինձ պատկանող քաղ. Երևան Շիրազի փող. հարող տարածք-հողամասը որը բաղկացած է զերո ամբողջ երկու /0,2/հա մակերեսից անհատույց և անորոշ ժամանակով օգտագործման եմ տրամադրում « ԵՎՐՈՊԱ » ՍՊԸ-ին :

2. Նշված տարածք- հողամասը պատկանում է Փոխատուին համաձայն սեփականության վկայականի թիվ 1637771 տրված 2.05.2003թ/ կրկնօրինակ տրված 07.12.2004թ/ և այն ազատ է երրորդ անձանց իրավունքներից/ վաճառված, գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում/ որը հաստատված է Դավթաշենի տարածքային ստորաբաժանման կողմից 24.12.2004թ տրված ԱԱ 95629 տեղեկանքով :

2.Կողմերի իրավունքները և պարտականությունները

Փոխատուն իրավունք ունի և պարտավոր է՝

Փոխառուից պահանջել տարածք- հողամասը օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:

Տարածք- հողամասը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո մինչև 28.12.2004թվականը:

Տարածք-հողամասը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում և դրա բոլոր պատկանելիքներով ու իրեն վերաբերվող փաստաթղթերով և տեղյակ պահել տարածք-հողամասի թերությունների մասին:

Փոխառուն իրավունք ունի և պարտավոր է՝

Փոխատուի կողմից տարածք-հողամասի թերությունների մասին չհայտնելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու տարածք-հողմասի թերությունները կամ հատուցել տարածք-հողմասի թերությունները վերացնելու համար իր կողմից կատարած ծախսերը:

Տարածք հողմասը պահպանել սարքին վիճակում և իրականացնել բոլոր կոմունալ վարձերի/հեռախոսի, ջրի, կոյուղու, էլեկտրոէներգիայի և հարկային պարտավորությունների/ վճարումը:

Տարածք-հողամասը օգտագործել դրա նշանակությանը համապատասխան և կատարել տարածք-հողամասի պահպանման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը:

3. Կողմերի պատասխանատվությունը

Փոխառուն կրում է անհատույց և անորոշ ժամանկով օգտագործման հանձնված տարածք-հողմասի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը, եթե շինությունը ոչնչացել կամ վնասվել է պայմանագրին կամ տարածքը նշանակությանն անհամապատասխան օգտագործելու

01410323 – 0930 0202

հետևանքով, կամ այն առանց Փոխատուի համաձայնության հանձնվել է երրորդ անձի:

Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմերից յուրքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից երեք ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

Տուրքը վճարվել է Ա. Մանուկյանի կողմից:

Սույն պայմանագրից ծագող իրավունքները գրանցել Դավթաշենի տարածքային ստորաբաժանումում 30 օրվա ընթացքում:

Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որից մեկ օրինակը պահվում է Երևանի Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ե. Սարգսյանի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ՓՈԽԱՏՈՒ՝

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
ՓՈԽԱՌՈՒ՝

Երկու հազար չորս թվականի դեկտեմբերի քսանյոթին սույն պայմանագիրը վավերացված է իմ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Ե.Սարգսյանիս կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Պայմանագիրն ստորագրված անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև / իրավաբանական անձի/իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ քաղ. Հենրիկ Պողոսյանի իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 300 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթական են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում հ. 24067

Գանձված է տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ Պետական տուրքի մասին» և « Նոտարիատի մասին » օրենքների

ՆՈՏԱՐ՝ Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՏԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
НОТАРИАЛЬНЫЙ ДОКУМЕНТ
NOTARIAL DOCUMENT